# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Օլանդա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ԿԳ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 56 | ՕԼԱՆԴԱ ՍՊԸ | ՕԼԱՆԴԱ ՍՊԸ | Լրակազմը բաղկացած է իրար վրա դրվող 2 մահճակալից (համալրված նրբատախտակով և ներքնակով) և աստիճանից: Մահճակալների հենասյուները (ոտքերը) և դրանք իրար կապող հորիզոնական գոտիները պատրաստվում են 30*30մմ մետաղյա քառանկյուն խողովակից՝ 2 մմ պատի հաստությամբ: Մահճակալի շրջանակները պատրաստվում է 40*20մմ մետաղյա քառանկյուն խողովակից՝ 2 մմ պատի հաստությամբ, իսկ գոտիները՝ քառանկյուն 30*10 մմ մետաղյա քառանկյուն խողովակից՝ 1 մմ պատի հաստությամբ, որոնք զոդվում են շրջանակի ներքևի մակարդակի հետ հավասար, որպեսզի նրբատախտակը և ներքնակը տեղավորվեն շրջանակի մեջ: Հենասյուների վրա ամրացվում են մետաղական կեռիկներ, իսկ շրջանակի դրսի անկյուններում զոդվում են 40*40*4 մմ չափի և 140 մմ երկարության մետաղական անկյունակներ, որոնց մեջտեղի հատվածում կատարվում է ուղղանկյունաձև փորված ապահովելով շրջանակի ամրացումը (տեղադրումը) հենասյան վրա:Մահճակալի հենասյուների վերին հատվածներում ամրացվում են հաապատասխան մետաղական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անցումներ՝ երկու հարկերը միմյանց վրա տեղադրելու համար: Ընդ որում՝ 2-րդ հարկի մահճակալի համար նախատեսվում են նաև կամարներ: Հենասյուների ուղղահայաց ճաղերը պատրաստվում են Φ 10մմ արտաքին տրամագծով և 1 մմ պատի հաստությամբ սնամեջ կլոր խողովակներով: Նրբատախտակների հաստությունը 9 մմ-ից , առավելագույնը 2 կտորից, որոնք տեղադրվում են շրջանակի մեջ՝ ողջ մակերեսով: Ներքնակի չափերը 190*80*18 սմ, պատրաստված զսպանակներով, բարձրորակ սպունգով և հիգիենիկ գործվածքային պաստառով: Հենասյուների ոտքերին ամրացվում են պլաստմասե խցափակումներ: Աստիճանի չափերը՝ 35*111սմ, որը մահճակալների շրջանակներին է ամրացվում հեղյուս-մանեկով: Աստիճանի կարկասը պատրաստվում է 20*20 մմ մետաղյա քառանկյուն խողովակից՝ 2 մմ պատի հաստությամբ: Աստիճանի ծայրերը՝ պլաստմասե խցափակումով: Մահճակալի դիրքից կախված՝ աստիճանը շրջանակներին ամրացնելու համար, յուրաքանչյուր (1-ին և 2-րդ հարկի) շրջանակի նույն կողմում համաչափ նախատեսվում են երկուական անցքեր: Մահճակալի կարկասի բոլոր եռակցումները պետք է լինեն ամբողջական (բացառությամբ շրջանակի գոտիների վերին՝ նրբատախտակին հարող հատվածների), բոլոր հանգույցները կլինեն հղկված, մահճակալը փոշեներկումով՝ գույնը պատվիրատուի հետ համաձայնեցնելով: Վերոնշյալ բոլոր տեսակի աշխատանքները կատարվում է մատակարարի կողմից, մատակարարի հաշվին իր նյութական միջոցներով (բոլոր օգտագործվող նյութերը կլինեն նոր՝ չոգտագործված): Բոլոր վերը նշված չափսերի շեղումը՝ +- 5% Երաշխիքային ժամկետը 1 տարի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОЛАНДА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/1-ԿԳ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 56 | | | |